ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-1093[9]-30.05.2025-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7[1]-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.

«6. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունները կամ դրա լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպությունները չպետք է ունենան 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակից, իրական շահառու կամ ղեկավար, որոնք կամ որոնց հետ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով հաստատված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի կամ որպես ղեկավարի գործողությունները կարող են հանգեցնել այդ կազմակերպության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը: Ընդ որում, անձի փոխկապակցվածությունը դիտարկվում է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածի:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ մաս.

«7. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակիցը կամ ղեկավարը չպետք է ներառված լինի Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ մաս.

«8. Սույն օրենքի իմաստով իրական շահառու են համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով իրական շահառու համարվող անձինք:»:

Հոդված 2. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7^2-րդ հոդված.

«Հոդված 7^2. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի մասնակցության դադարեցումը և լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը

1. Եթե լիցենզավորման ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաև եթե անձի՝ սույն օրենքով սահմանված կարգով արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 7^1-րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, համաձայն որոնց՝ ի հայտ են եկել արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության հետ փոխկապակցված անձանց (իսկ արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության հետ փոխկապակցված իրավաբանական անձի դեպքում՝ նաև նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգել արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության պարտատերերի շահերը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունում իր ունեցած ներդրումները, կամ արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետին հաջորդող օրվանից արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի

կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Եթե լիցենզիա ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 7^1-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքը, արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության (փոխանակման կետեր) 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի կամ իրական շահառուի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաև անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաև ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության(փոխանակման կետեր) 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:»

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների առաջացման դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձինք պարտավոր են այդ հանգամանքների առաջացման վերաբերյալ անհապաղ տեղեկություններ ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ հիմք բացահայտելու կամ արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի կողմից սույն մասով նախատեսված տեղեկությունը ստանալու դեպքում ուժը կորցրած է ճանաչում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի լիցենզիան:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին Օրենքի 7^1-րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված հիմքերի առաջացման դեպքում Կենտրոնական բանկի

խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի իր ունեցած համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը, իսկ այդ ժամկետում համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով: Սույն մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետին հաջորդող օրվանից արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերի առաջացման դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպությունը (փոխանակման կետ) պարտավոր է մեկ ամսվա ընթացքում համապատասպան ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ: Սույն մասով նախատեսված ժամկետում կազմակերպության կողմից համապատասխան ղեկավարին գրանցումից հանելու միջնորդագիր Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկը ընդունում է տվյալ ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ որոշում:

4. Սույն օրենքի 1-ին կամ 2-րդ հոդվածներով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձինք պարտավոր են այդ հանգամանքների առաջացման վերաբերյալ տեղեկություններ անհապաղ ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկը Օրենքի 7^1-րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով, ինչպես նաև սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ հոդվածով սահմանված որևէ հիմք բացահայտելու կամ արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ կողմից սույն մասով սահմանված տեղեկությունը ստանալու դեպքում ուժը կորցրած է ճանաչում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի լիցենզիան:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող 7-րդ կետով սահմանված հիմքն առաջանալու դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության (փոխանակման կետեր) 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաև անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաև ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության (փոխանակման կետեր) որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

Կ-1093[9]-30.05.2025-ՖԿ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7^1-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.

«6. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունները կամ դրա լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպությունները չպետք է ունենան 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակից, իրական շահառու կամ ղեկավար, որոնք կամ որոնց հետ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով հաստատված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի կամ որպես ղեկավարի գործողությունները կարող են հանգեցնել այդ կազմակերպության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության եւ գործարար համբավի

վարկաբեկմանը: Ընդ որում, անձի փոխկապակցվածությունը դիտարկվում է համաձայն «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածի:».

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7-րդ մաս.

«7. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակիցը կամ ղեկավարը չպետք է ներառված լինի Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված Ազգերի Կազմակերպության~~Միացյալ ազգերի կազմակերպության~~ անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 8-րդ մաս.

«8. Սույն օրենքի իմաստով իրական շահառու են համարվում «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով իրական շահառու համարվող անձինք:»:

Հոդված 2. Օրենքում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7^2-րդ հոդված.

«Հոդված 7^2. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի մասնակցության դադարեցումը եւ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը

1. Եթե լիցենզավորման ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաեւ եթե անձի՝ սույն օրենքով սահմանված կարգով արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 71 -րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված հիմքերից որեւէ մեկը, ինչպես նաեւ եթե ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, համաձայն որոնց՝ ի հայտ են եկել արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության հետ փոխկապակցված անձանց (իսկ արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության հետ փոխկապակցված իրավաբանական անձի դեպքում՝ նաեւ նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգել արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության պարտատերերի շահերը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունում իր ունեցած ներդրումները, կամ արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետին հաջորդող օրվանից արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու եւ առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Եթե լիցենզիա ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 71 -րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքը, արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության (փոխանակման կետեր) 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի կամ իրական շահառուի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաեւ անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաեւ ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության(փոխանակման կետեր) 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:»

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների առաջացման դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձինք պարտավոր են այդ հանգամանքների առաջացման վերաբերյալ անհապաղ տեղեկություններ ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որեւէ հիմք բացահայտելու կամ արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի կողմից սույն մասով նախատեսված տեղեկությունը ստանալու դեպքում ուժը կորցրած է ճանաչում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի լիցենզիան:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին Օրենքի 71 -րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված հիմքերի առաջացման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի իր ունեցած համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը,

իսկ այդ ժամկետում համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով: Սույն մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետին հաջորդող օրվանից արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու եւ առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված հիմքերի առաջացման դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպությունը (փոխանակման կետ) պարտավոր է մեկ ամսվա ընթացքում համապատասպան ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ: Սույն մասով նախատեսված ժամկետում կազմակերպության կողմից համապատասխան ղեկավարին գրանցումից հանելու միջնորդագիր Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկը ընդունում է տվյալ ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ որոշում:

4. Սույն օրենքի 1-ին կամ 2-րդ հոդվածներով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձինք պարտավոր են այդ հանգամանքների առաջացման վերաբերյալ տեղեկություններ անհապաղ ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկը Օրենքի 7[1]-րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով, ինչպես նաև սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ հոդվածով ~~Կենտրոնական բանկը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով կամ 2-րդ հոդվածով~~ սահմանված որեւէ հիմք բացահայտելու կամ արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ կողմից սույն մասով սահմանված տեղեկությունը ստանալու դեպքում ուժը կորցրած է ճանաչում արտարժույթի առուվաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի լիցենզիան:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող 7-րդ կետով սահմանված հիմքն առաջանալու դեպքում արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության (փոխանակման կետեր) 10 եւ ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակցի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաեւ անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաեւ ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Արտարժույթի առուվաճառք իրականացնող կազմակերպության (փոխանակման կետեր) որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1093-30.05.2025-ՖՎ-011/0) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք**ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	**«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք**ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը» բառերը առաջարկվում է փոխարինել «(այդ թվում՝ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը)» բառերով: Փոփոխությունը առաջարկվում է	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			իրականացնել հստակեցնելու համար, որ օրենքի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի իմաստով «բանկ» հասկացությունը ներառում է «օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը»:		
2.	ՀՀ կառավարություն	««**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք**ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով. «2) 4-րդ կետի «ը» ենթակետը «ներդրումային ֆոնդերի կառավարման հետ կապված հարաբերությունների մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի կառավարումն իրականացնող անձ չունեցող ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերը» բառերով.»: Փոփոխությունը առաջարկվում է իրականացնել ««Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ 23-Ն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված անցումային ժամկետներում ոչ հրապարակային ներդրումային	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ֆոնդերի՝ հաշվետվություն տրամադրող անձ լինելը պահպանելու նպատակով:		
3.	ՀՀ կառավարություն	««**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք**ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 25 **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1**	Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 4.2-րդ մասում «օրենքի 29-րդ հոդվածով» բառերը առաջարկվում է փոխարինել «օրենքով» բառով: Փոփոխությունը առաջարկվում է իրականացնել՝ հաշվի առնելով, որ տրաստերի կառավարիչների համար պարտականություններ նախատեսվելու են ոչ միայն օրենքի 29-րդ, այլ նաև օրենքի 9-րդ հոդվածով: Համարժեք փոփոխություն առաջարկվում է իրականացնել նաև **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում: Մասնավորապես՝ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող 1.3-րդ մասում առաջարկվում է** «օրենքի 29-րդ հոդվածով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	**««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք**ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 27**	Նախագծի 27-րդ հոդվածում՝ - 3-րդ մասում «25-րդ հոդվածի» բառերը փոխարինել «24-րդ հոդվածի» բառերով, իսկ «դրույթները» բառից հետո առաջարկվում է լրացնել «տրաստի կամ այլ համանման իրավաբանական կազմավորման առնչությամբ» բառերով: Դրույթների հետաձգված կիրառման վերաբերյալ նշված հստակեցումը առաջարկվում է ավելացնել տարընկալումներից խուսափելու համար՝ հաշվի առնելով, որ օրինակ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դրույթները վերաբերում են նաև հաշվետվություն տրամադրող անձանց: Նախագծի 27-րդ հոդվածում առաջարկվում է 5-րդ մասում «16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 20-րդ հոդվածի» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 19-րդ հոդվածի» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման**	Նախագծի 27-րդ հոդվածի 3-րդ մասը առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

		դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 27**	նախադասությամբ. «Սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 4.2-րդ մասով նախատեսված դրույթները տրաստի կամ այլ համանման իրավաբանական կազմավորման համար ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:»: Փոփոխությունն առաջարկվում է իրականացնել՝ հաշվի առնելով, որ Արդարադատության նախարարության առաջարկով որոշվել էր հետաձգել տրաստերի կառավարիչների համար պատասխանատվություն նախատեսող դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետը (6 ամիս հրապարակման պահից): Համապատասխան անցումային դրույթը նախատեսվել էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցների համար, սակայն համարժեք անցումային դրույթ չէր նախատեսվել Նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցների	փոփոխություն:	

			համար, ինչն առաջարկվում է շտկել:		
6.	ՀՀ կառավարություն	**«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»,**	Առաջարկվում է **«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք**ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **ՀՀ օրենքի նախագծին** հարակից բոլոր նախագծերում «Միացյալ Ազգերի Կազմակերպություն» բառերը փոխարինել «Միավորված Ազգերի Կազմակերպություն» բառերով՝ ապահովելու նշված միջազգային մարմնի անվանման հայերեն պաշտոնական տարբերակի ճշգրիտ մատնանշումը բոլոր օրենքների նախագծերում:	Ընդունվել է: Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		«««Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «««Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «««Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր			
7.	ՀՀ Կառավարություն	««Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածում «լրացնել» բառից առաջ ավելացնել «հոդվածը» բառը՝ օրենքի լրացվող դրույթին հղումը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» **ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 4**	հստակեցնելու նպատակով:		
8.	ՀՀ Կառավարություն	««Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» **ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 4**	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով՝ օրենքում լրացվող 6⍰1-րդ մասում հղումը «ա» կետին փոխարինել հղումով՝ «1)» կետին: Առաջարկի նպատակն է հղումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	ՀՀ Կառավարություն	««Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» **ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 4**	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով՝ օրենքի խմբագրվող հոդվածի 6-րդ մասում «մինչև չվերանան սույն» բառերից հետո ավելացնել «հոդվածի 6-րդ» բառերը՝ համապատասխան նորմին հղումը հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
10.	ՀՀ Կառավարություն	**««Արժեթղթերի շուկայի մասին»**	Առաջարկվում է Նախագծի 6-րդ Հոդվածի 4-րդ մասում «սույն օրենքի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է	Ընդունվել է:

		օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Հոդված 6, մաս 4	1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով» բառերից հետո ավելացնել «լրացվող 3[1]-ին կետով»՝ բառերը փաթեթի մյուս օրենքների նախագծերում օգտագործված ձևակերպումների հետ միատեսակություն ապահովելու նպատակով:	համապատասխան փոփոխություն:	
11.	ՀՀ Կառավարություն	**««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծ, Հոդված 3, մաս 4**	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ համապատասխան նորմին հղումը, այն է՝ «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով կամ 2-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկը Օրենքի 7[1]-րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով, ինչպես նաև սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ հոդվածով» բառերով: Առաջարկը նպատակ ունի հստակեցնել հղումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: